ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Ն ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-21/24

ք. Երևան «28» հունիսի 2021թ.

ՀՀ արդարադատության նախարարությունն ի դեմս գլխավոր քարտուղար Սուրեն Գալստյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և «ՆԱԳՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Նարեկ Գրիգորյանի, որը գործում է ՍՊ ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագրի N 2 հավելված սահմանված Օրացուցային գրաֆիկի ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.11 Պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը, օգտագործելով սույն պայմանագրի հավելված N 1.1 ով սահմանված ռեսուրսները:

3.4.12 Պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 50 450 000 (հիսուն միլիոն չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, որից 8 408 333.33 (ութ միլիոն չորս հարյուր ութ հազար երեք հարյուր երեսուներեք դրամ երեսուներեք լումա) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Սույն պայմանագրի 3.4.12 և 3.4.13 կետերով սահմանված պայմանների կիրառման դեպքում, եթե ներկայացված տեղեկատվությունը գնահատվում է սահմանված պահանջներին համապատասխանող, ապա ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով կապալառուին փոխհատուցվում է պայմանագրի գնի 1 տոկոսը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ արդարադատության նախարարություն	<<ՆԱԳՇԻՆ>>ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8	Հասցե՝ ք. Երևան, Եղվարդի խճուղի 111
ՀՀ Ֆինանսների նախարարության	Գործունեության հասցե՝ ք. Երևան,
Գործառնական վարչություն	Բանկ՝ ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 02506264	ՀՀ 19300 236192400
	ՀՎՀՀ 01282917
	Տնօրեն՝ Ն.Գրիգորյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
<<28>> հունիսի 2021թ.. կնքված
ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-21/24 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

1. Ներքին ջրամատակարարում և կենցաղային կոյուղի					
N	Անվանումը	Չափման միավորը	Ընդհ. Քանակը	Նյութի միավոր արժեքը հազար ՀՀ դրամ	Նյութերի ընդհանուր արժեքը հազար ՀՀ դրամ
1	2	3	4	5	6
ՍԱՌԸ ԵՎ ՏԱՔ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ					
1	de20 պոլիպրոպիլենե խողովակների մոնտաժում, փորձարկումով (ներառյալ ձևավոր մասերը)	գծմ	110	994,63	109409,37
2	DN15 գնդային փականի մոնտաժում (ներառյալ կցորդիչները ամերիկանկա)	հատ	48	3680,13	176646,40
3	de20 խողովակների պատերին ամրացման ամրակների մոնտաժում	հատ	55	3680,13	202407,34
ԿՈՅՈՒՂՈՒ ՀԱՄԱԿԱՐԳ					
1	Q=18մ3/ժ, H=6մ պարամետրերով կոյուղու պոմպի մոնտաժում նկուղային հարկում (канализационная станция)	կոմպ.	1	497315,32	497315,32
2	Φ110 պոլիէթիլենե խողովակների մոնտաժում ներառյալ հողային աշխատանքները,փորձարկումով	գծմ	4	3978,52	15914,09
3	Φ110 պոլիէթիլենե խողովակների մոնտաժում, փորձարկումով	գծմ	7	3978,52	27849,66
4	Φ110 կոյուղու PVC խողովակների մոնտաժում ներառյալ հողային աշխատանքները,փորձարկումով	գծմ	5	3182,82	15914,09
5	Φ110 կոյուղու PVC խողովակների մոնտաժում,փորձարկումով	գծմ	65	1989,26	129301,98
6	Φ50 կոյուղու PVC խողովակների մոնտաժում,փորձարկումով	գծմ	21	1193,56	25064,69
7	Φ110, PVC ձևավոր մասերի մոնտաժում	հատ	35	1989,26	69624,14
8	Φ110x50, PVC անցումային ձևավոր մասերի մոնտաժում	հատ	12	1591,41	19096,91
9	Φ50, PVC ձևավոր մասերի մոնտաժում	հատ	15	1193,56	17903,35
10	Φ110, պոլիէթիլենե խողովակների ձևավոր մասերի մոնտաժում	հատ	3	2983,89	8951,68
11	Φ110 ստուգիչ-մաքրիչների մոնտաժում	հատ	12	2983,89	35806,70
12	Խողովակի ամրացումը պատին կեռներով (клипсы) (Տակառիկ (шпилька) M10/100, Ամրացման սալ, Խամութ, 2 հատ խարիսխ գամասեռ)	կոմպ.	30	497,32	14919,46

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՍԱՐՔԵՐ					
1	Լվացարակոնքի մոնտաժում (ներառյալ տաք և սառը ջրի ծարակ, սիֆոն, միացման ճկուն խողովակներ)	կոմպ.	17	46051,40	782873,78
2	Զուգարանակոնք, լվացման բաքով մոնտաժում (ներառյալ ջրահեռացման (GF) խողովակ, ջրի միացման ճկուն խողոբվակ)	կոմպ.	18	45753,01	823554,17
3	Ուccуар մոնտաժում (ներառյալ միացման դետալները)	կոմպ.	4	53710,05	214840,22
	Ընդամենը՝				**3187393,35**

2. Ներքին լուսավորություն

N	Անվանումը	Չափման միավորը	Ընդհ. Քանակը	Նյութի միավոր արժեքը ՀՀ դրամ	Նյութերի ընդհանուր արժեքը հազար ՀՀ դրամ
1	Վարդակ	հատ	430	795,70	342152,94
2	Անջատիչ	հատ	135	795,70	107420,11
3	2X4	հատ	1410	188,98	266461,55
4	2x2,5	հատ	1350	218,82	295405,30
5	2x1,5	հատ	1000	169,09	169087,21
6	Բաժանարար տուփ	հատ	110	99,46	10940,94
7	Տեղադրման տուփ	հատ	560	79,57	44559,45
8	Ապահովիչների տուփ (12տեղ)	հատ	9	2088,72	18798,52
9	Միաֆազ անջատիչ(50Ա)	հատ	84	2088,72	175452,84
10	Լեդ լույս (300x300)	հատ	360	3048,54	1097475,45
	Ընդամենը՝				**2527754,309**

3. ՆԿՈՒՂԱՅԻՆ ՀԱՐԿ

N	Անվանում	Չ/Մ	քանակ	Աշխատանք	Նյութ	Ընդամենը
1	առաստաղ՝ սվաղ, գաջ	քմ	318,6	696,24	596,78	411956,12
2	ս/հ կախովի առաստաղ	քմ	21	1491,95	2685,50	87726,42
3	հատակ սեղմագրանիտ	քմ	223,2	3481,21	4475,84	1776012,47
4	հատակ լամինատ	քմ	110,4	1989,26	2983,89	549036,11
5	ընդ.պատերի հարդարում	քմ	1495,01	1571,52	497,32	3092924,13
6	պատերի կաֆել հ1.6մ	մ	43,3	3481,21	3879,06	318699,55
7	շրիշակ հատակի նյութից	զմ	384,68	696,24	994,63	650444,68
8	ապակե վիտրաժ հ2.1	քմ	3,60	0,00	29838,92	107420,11
9	դռներ 1.2մ,հ2.1	հատ	2	0,00	94489,91	188979,82
10	դռներ 0.9մ,հ2.1	հատ	11	0,00	64650,99	711160,91
11	դռներ 0.8մ,հ2.1	հատ	6	0,00	59677,84	358067,03
12	պատուհանագոգ՝ ներքին	զմ	18,15	994,63	1989,26	54157,64
13	100մմ նոր պատեր	քմ	4,50	1491,95	2188,19	16560,60
14	200մմ նոր պատեր	քմ	7,50	1491,95	2884,43	32822,81
15	ճաղապատ հ2.4	քմ	9,80	9946,31	10940,94	204694,99
16	մետաղական դռներ հ2.4	քմ	22,80	9946,31	44758,38	1247266,82
17	հատակի Ց/Ա քանդում	քմ	333,60	198,93	0,00	66361,76
18	պատերի քանդում	քմ	6,20	994,63	0,00	6166,71
19	պատերի մաքրում	քմ	1473,81	29,84	0,00	43976,90
	Ընդամենը՝					**9924435,57**

4. Առաջին հարկ

N	Անվանում	Չ/Մ	քանակ	Աշխատանք	Նյութ	Ընդամենը

1	առաստաղ՝ սվաղ, գաջ	քմ	186	497,32	397,85	166501,17
2	ս/հ կախովի առաստաղ	քմ	7,60	1491,95	2983,89	34016,37
3	հատակ սեղմագրանիտ	քմ	58,9	2983,89	2983,89	351502,47
4	հատակ լամինատ	քմ	127,9	1989,26	3978,52	763279,55
5	ընդ.պատերի հարդարում	քմ	605	1362,64	397,85	1065100,22
6	պատերի կաֆել հ1.6մ	մ	24	3481,21	3978,52	179033,52
7	շրիշակ հատակի նյութից	զմ	201,4	696,24	994,63	340541,64
8	ապակե վիտրաժ հ2.4	քմ	4,32	0,00	19892,61	85936,09
9	դռներ 1.5մ,հ2.4	հատ	3	0,00	79570,45	238711,35
10	դռներ 0.9մ,հ2.1	հատ	9	0,00	39785,23	358067,03
11	դռներ 0.8մ,հ2.1	հատ	2	0,00	39785,23	79570,45
12	դռներ 1.8մ,հ2.4	հատ	1	0,00	79570,45	79570,45
13	պատուհանագոգ՝ ներքին	զմ	20,10	994,63	2188,19	63974,64
14	100մմ նոր պատեր	քմ	18	1491,95	2188,19	66242,40
15	պատշգամբի դուռ հ2.7	հատ	1	0,00	79570,45	79570,45
16	մետաղապլաստե ապակեպատում	քմ	8,38	0,00	24865,77	208375,12
17	դռների քանդում	հատ	17	994,63	0,00	16908,72
18	շրիշակի քանդում	զմ	270	99,46	0,00	26855,03
19	հատակի Ց/Ա քանդում	քմ	270	497,32	0,00	134275,14
20	պատերի քանդում	քմ	36	994,63	0,00	35806,70
21	պատերի մաքրում	քմ	650	198,93	0,00	129301,98
	Ընդամենը՝					**4503140,49**

5. Երկրորդ հարկ

N	Անվանում	Չ/Մ	քանակ	Աշխատանք	Նյութ	Ընդամենը
1	առաստաղ՝ սվաղ, գաջ	քմ	185,6	497,32	397,85	166143,10
2	հատակ սեղմագրանիտ	քմ	149,9	2884,43	2983,89	879661,28
3	հատակ լամինատ քմ	քմ	35,7	1989,26	3978,52	213049,88
4	ընդ.պատերի հարդարում	քմ	408,95	2407,01	497,32	1187722,27
5	շրիշակ հատակի նյութից	զմ	132,5	696,24	1094,09	237219,41
6	ապակե վիտրաժ հ2.4	քմ	9,12	0,00	19892,61	181420,63
7	դռներ 1.5մ,հ2.4	հատ	1	0,00	79570,45	79570,45
8	դռներ 0.9մ,հ2.1	հատ	6	0,00	39785,23	238711,35
9	դռներ 0.8մ,հ2.1	հատ	3	0,00	39785,23	119355,68
10	պատուհանագոգ՝ ներքին	զմ	13,30	994,63	2188,19	42331,48
11	100մմ նոր պատեր	քմ	5,50	1491,95	2188,19	20240,73
12	պատշգամբի դուռ հ2.7	հատ	7	0,00	79570,45	556993,16
13	պատշգամբի դռան ճաղավանդակ	քմ	3,51	9946,31	14919,46	87278,84
14	դռների քանդում	հատ	19	994,63	0,00	18897,98
15	շրիշակի քանդում	զմ	200	99,46	0,00	19892,61
16	հատակի Ց/Ա քանդում	քմ	270	497,32	0,00	134275,14
17	պատերի քանդում	քմ	32	994,63	0,00	31828,18
18	պատերի մաքրում	քմ	450	198,93	0,00	89516,76
	Ընդամենը՝					**4304108,93**

6. Երրորդ հարկ

N	Անվանում	Չ/Մ	քանակ	Աշխատանք	Նյութ	Ընդամենը
1	առաստաղ՝ սվաղ, գաջ	քմ	131,4	497,32	397,85	117625,02
2	հատակ սեղմագրանիտ	քմ	88,4	2983,89	2983,89	527552,09
3	հատակ լամինատ	քմ	43	1989,26	3978,52	256614,71
4	ընդ.պատերի հարդարում	քմ	377,5	2287,65	477,42	1043815,13
5	շրիշակ հատակի նյութից	զմ	119,8	696,24	1143,83	220439,99
6	ապակե վիտրաժ հ2.4	քմ	4,32	0,00	1989,26	8593,61
7	դռներ 1.5մ,հ2.4 հատ	հատ	1	0,00	79570,45	79570,45
8	դռներ 0.9մ,հ2.1 հատ	հատ	8	0,00	39785,23	318281,80
9	դռներ 0.8մ,հ2.1 հատ	հատ	3,68	0,00	39785,23	146409,63
10	պատուհանագոգ՝ ներքին	զմ	15,50	1491,95	2188,19	57042,07

11	100մմ նոր պատեր	քմ	35	1491,95	2188,19	128804,67
12	պատշգամբի դուռ հ2.7	հատ	7	0,00	79570,45	556993,16
13	պատշգամբի դռան ճաղավանդակ	քմ	7,02	9946,31	9946,31	139646,14
14	դռների քանդում	հատ	20	994,63	0,00	19892,61
15	շրիշակի քանդում	զմ	220	99,46	0,00	21881,87
16	հատակի Ց/Ա քանդում	քմ	270	497,32	0,00	134275,14
17	պատերի քանդում	քմ	7,70	994,63	0,00	7658,66
18	պատերի մաքրում	քմ	450	99,46	0,00	44758,38
	Ընդամենը՝					**3829855,12**

7. Չորրորդ հարկ

N	Անվանում	Չ/Մ	քանակ	Աշխատանք	Նյութ	Ընդամենը
1	առաստաղ՝ սվաղ, գաջ	քմ	179,6	596,78	397,85	178635,66
2	ս/հ կախովի առաստաղ	քմ	26,50	1989,26	2983,89	131788,56
3	հատակ սեղմագրանիտ	քմ	26,50	2983,89	2983,89	158146,27
4	հատակ լամինատ	քմ	153,1	1989,26	3978,52	913667,71
5	ընդ.պատերի հարդարում	զմ	601,3	1193,56	417,74	968875,67
6	պատերի կաֆել հ1.6մ	քմ	35,5	2983,89	3978,52	247165,71
7	շրիշակ հատակի նյութից	զմ	199	696,24	1094,09	356276,70
8	ապակե վիտրաժ հ2.4	քմ	4,32	0,00	19892,61	85936,09
9	դռներ 1.5մ,հ2.4	հատ	1	0,00	89516,76	89516,76
10	դռներ 0.9մ,հ2.1	հատ	10	0,00	39785,23	397852,26
11	դռներ 0.8մ,հ2.1	հատ	5	0,00	39785,23	198926,13
12	պատուհանագոգ՝ ներքին	զմ	16,50	1491,95	2188,19	60722,20
13	200մմ նոր պատեր	քմ	65	1491,95	2983,89	290929,46
14	պատշգամբի դուռ հ2.7	հատ	7	0,00	79570,45	556993,16
15	պատշգամբի դռան ճաղավանդակ	քմ	3,51	9946,31	11935,57	76805,38
16	դռների քանդում	քմ	15	994,63	0,00	14919,46
17	շրիշակի քանդում	քմ	260	99,46	0,00	25860,40
18	հատակի Ց/Ա քանդում	քմ	260	497,32	0,00	129301,98
19	պատերի քանդում	քմ	7,70	994,63	0,00	7658,66
20	պատերի մաքրում	քմ	660	198,93	0,00	131291,24
	Ընդամենը՝					**5021269,45**

8. Հինգերորդ հարկ

N	Անվանում	Չ/Մ	քանակ	Աշխատանք	Նյութ	Ընդամենը
1	առաստաղ՝ սվաղ, գաջ	քմ	261,5	497,32	397,85	234086,32
2	ս/հ կախովի առաստաղ	քմ	31	1989,26	1989,26	123334,20
3	հատակ սեղմագրանիտ	քմ	111,6	3481,21	4475,84	888006,24
4	հատակ լամինատ	քմ	173,3	1989,26	3978,52	1034216,94
5	ընդ.պատերի հարդարում	քմ	817,1	1710,76	795,70	2048035,99
6	պատերի կաֆել հ1.6մ	քմ	54,3	3282,28	4475,84	421265,86
7	շրիշակ հատակի նյութից	զմ	269,2	497,32	994,63	401631,85
8	ապակե վիտրաժ հ2.4	քմ	4,32	0,00	28844,29	124607,33
9	դռներ 1.5մ,հ2.4	հատ	1	0,00	147205,33	147205,33
10	դռներ 0.9մ,հ2.1	հատ	11	0,00	65645,62	722101,84
11	դռներ 0.8մ,հ2.1	հատ	6	0,00	63656,36	381938,17
12	պատուհանագոգ՝ ներքին	զմ	17,30	1491,95	2188,19	63666,31
13	200մմ նոր պատեր	քմ	65	1392,48	2983,89	284464,36
14	պատշգամբի դուռ հ2.7	հատ	6	0,00	79570,45	477422,71
15	պատշգամբի դռան ճաղավանդակ	քմ	3,51	9946,31	14919,46	87278,84
16	դռների քանդում հատ	քմ	15	99,46	0,00	1491,95
17	շրիշակի քանդում	քմ	260	9,95	0,00	2586,04
18	հատակի Ց/Ա քանդում	քմ	260	79,57	0,00	20688,32
19	պատերի քանդում	քմ	7,70	69,62	0,00	536,11
20	պատերի մաքրում	քմ	660	9,95	0,00	6564,56
	Ընդամենը՝					**7471129,26**

9. Վեցերորդ հարկ						
N	Անվանում	Չ/Մ	քանակ	Աշխատանք	Նյութ	Ընդամենը
1	առաստաղ՝ սվաղ, գաջ քմ	քմ	78,7	497,32	397,85	70449,69
2	հատակ սեղմագրանիտ քմ	քմ	23,40	3282,28	4276,91	176885,11
3	հատակ լամինատ քմ	քմ	55,3	1989,26	3978,52	330018,45
4	ընդ.պատերի հարդարում	քմ	178,3	1491,95	497,32	354685,29
5	շրիշակ հատակի նյութից զծ	գմ	47	696,24	795,70	70121,46
6	դռներ 1.0մ,հ2.1	հատ	1	0,00	62661,73	62661,73
7	դռներ 0.9մ,հ2.1	հատ	2	0,00	62661,73	125323,46
8	պատուհանագոգ՝ ներքին	գմ	22,40	1491,95	2188,19	82434,99
	Ընդամենը՝					1272580,17
Ընդամենը՝ 1-9					**42041666,666**	
ԱԱՀ 20%					**8 408 333,333**	
Ամբողջը՝ ներառյալ Շահույթը					**50 450 000,00**	

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ ք. Երևան, Շենգավիթ Գ. Նժդեհի փ. 23/1 հասցեում գտնվող շենքում:

Ծանոթություն.

1. Շինանյութերն ու սարքավորումները ձեռք են բերվում կապալառու կազմակերպության կողմից՝ բացառապես շինարարական աշխատանքներում օգտագործելու համար՝ ըստ շինարարական նորմերի չափորոշիչների, օգտագործվող բոլոր նյութերն ու ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված:

2. Վերանորոգման մեջ օգտագործվող նյութերը և ապրանքները պետք է ունենան որակի սերտիֆիկատ և լինեն գործարանային փաթեթավորմամբ՝ եթե դա կիրառելի է տվյալ նյութի կամ ապրանքի համար:

5. Վերանորոգման ենթակա աշխատանքներն իրականացվելու են ՀՀ ք. Երևան, Շենգավիթ Գ. Նժդեհի փ. 23/1:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ արդարադատության նախարարություն
ՀՀ ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
Գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02506264

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<ՆԱԳՇԻՆ>>ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Եղվարդի խճուղի 111
Գործունեության հասցե՝ ք. Երևան,
Բանկ՝ ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ 19300 236192400
ՀՎՀՀ 01282917
Տնօրեն՝ Ն.Գրիգորյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«28» հունիսի 2021թ.. *կնքված*
ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-21/24 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ	Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	140 օրացուցային օրվա ընթացքում
ԸՆԴԱՄԵՆԸ		**Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը**	**140 օրացուցային օրվա ընթացքում**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ արդարադատության նախարարություն
ՀՀ ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8
ՀՀ Ֆինանսների նախարարության
Գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02506264

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<ՆԱԳՇԻՆ>>ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Եղվարդի խճուղի 111
Գործունեության հասցե՝ ք. Երևան,
Բանկ՝ ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ 19300 236192400
ՀՎՀՀ 01282917
Տնօրեն՝ Ն.Գրիգորյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.